ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ Է ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՇԱՀԱԲԱԺԻՆՆԵՐԻ ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

14.08.2018 16:26

ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմը մշակել է **«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ,** որը ներկայացվել է ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի քննարկմանը:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 11.08.2018թ. որոշմամբ հավանություն է տրվել «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծին և որոշվել է Հայաստանի Հանրապետության իրավասու պետական մարմնին ներկայացնել համապատասխան առաջարկություն:

ՀՀ կառավարության 01.06.2018թ. թիվ 581 որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրով Կառավարության կարևոր ծրագրային դրույթներից է ՀՀ տնտեսական գրավչությունը մեծացնելու և ներդրումային միջավայրը բարելավելու նպատակով ձևավորել հնարավորինս կայուն և կանխատեսելի հարկային միջավայր, ինչպես նաև շարունակաբար բարելավել գործարար միջավայրը:

Նախագծով առաջարկվում է վերացնել հարկային օրենսդրությամբ նախատեսված շահաբաժինների հարկման կառուցակարգը և վերադառնալ նախքան 04.10.2016 թվականի ՀՀ հարկային օրենսգրքի ընդունումն առկա կարգավորումներին, երբ իրավաբանական անձի գործունեության արդյունքում ձևավորված շահույթից մասնակիցների (բաժնետերերի, փայատերերի) ստացած շահաբաժինները չէին հարկվում:

Գործող իրավակարգավորումը խնդրահարույց է թե՛ իրավական և թե՛ տնտեսական առումներով:

ՀՀ Սահմանադրության, ՀՀ հարկային օրենսգրքի և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի դրույթներից, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայից (մանրամասները՝ Նախագծի հիմնավորման մեջ) բխում է, որ հարկն իրենից ներկայացնում է դրամական միջոցների նկատմամբ անձի սեփականության իրավունքի սահմանափակում, որը սահմանվում է օրենքով՝ Հարկային օրենսգրքով և որի նպատակը հանրության շահերի, այն է՝ հասարակության և պետության կարիքների բավարարումն է: Վերջիններս փաստորեն կարող են բավարարվել հասարակության անդամներին սեփականության իրավունքով պատկանող դրամական միջոցների՝ Հարկային օրենսգրքով սահմանված չափով հօգուտ պետության մասհանումներ կատարելու միջոցով:

Միևնույն ժամանակ, քանի որ առկա է անձի հիմնական իրավունք հանդիսացող սեփականության իրավունքի սահմանափակում, վերջինս պետք է բավարարի ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդվածով, ինչպես նաև ՄԻԵԿ 1-ին արձանագրության 1-ին հոդվածով սահմանված համաչափության սկզբունքի պահանջներին:

Եթե շահաբաժինների հարկման նպատակի իրավաչափությունն ընդունելի է՝ հասարակության և պետության կարիքների բավարարման տեսակետից, ապա այդ նպատակին հասնելու համար պետության կողմից ընտրված միջոցների պիտանիության և անհրաժեշտության հարցում առկա են լուրջ խնդիրներ:

Շահաբաժինները կամ դիվիդենտները հարկվում են կա՛մ եկամտահարկով, կա՛մ շահութահարկով՝ կախված նրանից, թե ով է շահաբաժին վճարող իրավաբանական անձի մասնակիցը՝ ֆիզիկական անձ, թե՞ իրավաբանական անձ: Շահաբաժինները վճարվում են իրավաբանական անձի շահույթից, որն արդեն իսկ Հարկային օրենսգրքի իմաստով հանդիսանում է հարկման բազա

(հոդված 105): Վերջինս ձևավորվում է հարկատու իրավաբանական անձի ձեռնարկատիրական գործունեությունից, որը, Հարկային օրենսգրքի 107-րդ հոդվածի համաձայն, հանդիսանում է հարկվող եկամտի աղբյուր: Ակնհայտ է, որ իրավաբանական անձը. քաղաքացիական շրջանառությունում գործելով իր մասնակիցներից իրավական ինքնավարության պայմաններում, այդուհանդերձ, նախ և առաջ, ծառայում է նրանց տնտեսական շահերին, այլ կերպ ասած՝ առևտրային կազմակերպությունների գործունեության արդյունքում գոյացած շահույթը, վերջին հաշվով, պատկանում է այդ կազմակերպությունների սեփականատերերին:

Սրանից հետևում է, որ իրավաբանական անձի շահույթից գանձվող շահութահարկը և նրա մասնակիցների շահաբաժնից գանձվող եկամտային հարկը կամ շահույթահարկը գանձվում են միևնույն աղբյուրից, միևնույն տնտեսական գործունեությունից, որը փաստացի իրականացվում է միևնույն անձի՝ իրավաբանական անձի մասնակցի կամ մասնակիցների կողմից: Ստացվում է, որ նույն անձը միևնույն գործունեության համար հարկ վճարելու իր սահմանադրական պարտականությունը կատարում է կրկնակի անգամ, ինչն իրավական տեսանկյունից մտահոգիչ է և չի կարող համարվել պետության կողմից սեփականության իրավունքի սահմանափակման պիտանի և անհրաժեշտ միջոց:

Պալատը գտնում է, որ միևնույն գործունեության կրկնակի հարկումը՝ իրավաբանական անձից շահութահարկ, իսկ նրա մասնակիցների ստացած շահաբաժիններից՝ եկամտային հարկ կամ շահութահարկ, անձի սեփականության իրավունքի հակասահմանադրական սահմանափակում է և չի կարող պիտանի և անհրաժեշտ լինել պետության և հասարակության կարիքների բավարարման հանրային շահի իրացման նպատակի համատեքստում, քանի որ դրանով անհամաչափ վնաս է հասցվում այլ շահերի՝ տնտեսական գործունեության ազատությանը, ընդհանուր տնտեսական բարեկեցությանն ու սոցիալական արդարությանը:

ԲԵՌՆԵԼ ՆԱԽԱԳԻԾԸ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Առաջարկվող նորություններ

14.08.2018ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏՆ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ԱԱՀ-ՈՎ ՀԱՐԿԵԼՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼ

14.08.2018ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ Է ՓԱՍՏԱԲԱՆԻՆ ՎԻՐԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՁՐՊԱՐՏԵԼՈՒ ԱՐԱՐՔՆԵՐԸ ՔՐԵԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

14.08.2018ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏՆ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է ՎԻՐԱՎՈՐԱՆՔԻ ԵՎ ՁՐՊԱՐՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԵՐԸ ՔՆՆԵԼ ՀԱՏՈՒԿ ՀԱՅՑԱՅԻՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԿԱՐԳՈՎ

14.08.2018ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴՆ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է ՔՐԵԱԿԱՆԱՑՆԵԼ ՀԱՅՀՈՅԱՆՔԸ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })